Պարույր Սևակ

Ցմահ բանտարկյալ

Հորիզոնական-միջօրեական սեղմ օղակներում
(Նայեցե՛ք մի պահ այս գլոբուսին)
Խեղճ Երկրագունդն է կապվել-կապանքվել:
Եվ չկա ո՛չ մի պետքական կացին, ուրագ կամ սղոց:
Ու երբ պարապ եմ
(Այսինքը՝ երբ ինքս ինձ հետ եմ,
Այսինքը՝ երբ ես եմ իսկական),
Ատամներով եմ շարունակ կրծում
Ցմահ բանտարկված այս երկրագնդի
Ցանցը երկաթե՝
Ապավինելով ծով բարությանն իմ՝
Եվ բարությունից շատ ավելի մեծ համբերությանը:
Բայց ես ո՛չ մի կերպ,
Ո՛չ մի հրաշքով
Չե՞մ կարող ապրել Աստվածաշնչի հերոսների չափ,
Ո՛չ 300, ո՛չ 100 տարի:
Ուրեմըն դուք էլ, որ մարդ եք կոչվում,
Դո՞ւք էլ օգնեցեք ձե՛ր ատամներով,
Թերևս ազատենք
Ցմահ վանդակված այս խեղճ-անճարին...

10. XI. 65

Չանախչ